Արձանագրություն N 3

«ԳՀԱՊՁԲ-15/15-2021-1-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնանշման հարցման եղանակով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

«23» «ապրիլի» 2021թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Շ.Գևորգյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Աղամյան, Ս.Սնոյան, Կ.Ղարիբջանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ.Եգանյան

1. «ԳՀԱՊՁԲ-15/15-2021-1-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը, հանձնաժողովի նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով՝ մասնակիցների կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման նպատակով:

Սահմանված ժամկետում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները, ուստի հանձնաժողովը որոշեց «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Սահմանված ժամկետում «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները՝ Հավելված 1-ի խմբագրման և հրավերի 40-րդ չափաբաժնի մասով, սակայն «Մեդիսար» ՍՊԸ-ի կողմից հրավերի 39-րդ չափաբաժնի մասով՝ որպես շտկում ներկայացված մակնիշը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, մասնավորապես՝ հրավերով պահանջվող թվով 27 լոկուսների փոխարեն առաջարկվել է 25-ը, իսկ հրավերով պահանջվող DYS391, DYS570 և DYS576 լոկուսները ներառված չեն մասնակցի տեխնիկական բնութագրում: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 42-րդ կետը, հանձնաժողովը որոշեց, մերժել «Մեդիսար» ՍՊԸ-ի հայտը՝ 39-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. «ԳՀԱՊՁԲ-15/15-2021-1-ԴԲԳԳԿ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների մասին:**

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել սույն նիստը և.

ա) մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի, վայրի և անցկացման կարգի մասին:

բ) բանակցությունների վարման ժամկետի սկիզբ է սահմանվում 2021 թվականի ապրիլի 27-ը ժամը 15:00-ն, իսկ ավարտը՝ 2021 թվականի ապրիլի 27-ը ժամը 17:00-ն: Բանակցությունների

անցկացվեն էլեկտրոնային եղանակով՝ ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Հերացի 5/1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

4. Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________ Շ.Գևորգյան

Անդամներ՝ ______________ Կ.Ադամյան

______________ Ս.Սևոյան

______________ Կ.Ղարիբջանյան

______________

Քարտուղար՝ ______________ Ռ.Եգանյան